# ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
## (հանրամատչելի ուրվագծեր)

### I. ԿԵՆՍԱՏԱՐԱԾՔ - ՀԱՅՈՑ ԲՆՕՐՐԱՆԻ ԲԱՑԱՌԻԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց բնօրրանը Միջերկրական, Սև և Կասպից ծովերի միջև ընկած լեռնակղզին է, որն աշխարհագրական և երկրաբանական գրականության մեջ հայտնի է Հայկական բարձրավանդակ կամ Հայկական լեռնաշխարհ անունով: Սա Մեծ ու Փոքր Հայքերն ընդգրկող պատմական Հայաստանն է:

1. Հին աշխարհի ժողովուրդներից մեզ են հասել տասնյակ առասպելական երկրների անուններ. շումերական Դիլմուն ու Արատտա, հունական Հիպերբորեա և Ատլանտիդա, հնդկական Մերու, իրանական Բարձր Հարա լեռներով շրջապատված Հվանիրատա, Հին կտակարանի Եդեմ, ռուսական Բույան կղզին իր Ալատիր ժայռով, սկանդինավյան Իգդրասիլ ծառը և այլն: Այս առասպելական երկրների մասին աշխարհի տարբեր ծայրերում պահպանված նկարագրությունների համեմատությունը միարժեքորեն ցուցում են, որ նրանց հիմնական բնութագրերը նույնական են, նրանց մասին պահպանված ու առասպելականացված պատկերացումներն ծագել են նույն ակունքից ու տարածվել (նկարագրությունների համեմատության որոշ մանրամասներ տես՝ Հ. Մարտիրոսյան, Աշխարհարարման աստվածաշնչյան առասպելի ակունքները և Հայաստանը, Աստվածաշնչական Հայաստան ժողովածու, Երևան, 2005, էջ 52, կամ http://www.anunner.com/hamlet.martirosyan):




Առասպելական բոլոր երկրների նկարագրության մեջ առանցքում տիեզերական Սրբազան Լեռն է, որից բխում են քաղցրահամ ջրերի գետերը, նրա գագաթի շուրջ են պտտվում երկնային լուսատուները, այնտեղ աստվածների կացարանն է, մարդկային ցեղի բնօրրանը: Դա նախաստեղծ Սրբազան Աշխարհի նկարագրությունն է: Ինչպես Հին Կտակարանում, այնպես էլ հունական, հնդարիական, իրանական, շումերական և մյուս հնագույն աղբյուրներում համաշխարհային լեռն ընդգրկող նախաստեղծ Սրբազան Աշխարհը ներկայացվում է որպես այդ ազգերի պատմական բնակության տարածքներից դուրս և հեռու գտնվող առասպելական երկիր, որը աստվածային արարչության վայրն է, առատության երկիրն է, աստվածների բնակավայրն է, աստվածային Օրենքի ու Առաքինության երկիրն է:

Ի տարբերություն այլ ժողովուրդների առասպելականացված պատկերացումների, ավանդազրույցներում և գրավոր աղբյուրներում աշխարհարարմանը վերաբերող հանգույցային գաղափարները հանդես են գալիս որպես Մեծ Հայքի կենտրոնական

շրջանների սրբազան տեղանուններ, իսկ նախաստեղծ Սրբազան Աշխարհի նկարագրությունը ներկայացնում է Մեծ Հայքի պատմական, իրական աշխարհագրությունը: Սա հիմնավորվում է և այն փաստով, որ որոշ հնագույն գրավոր աղբյուրներ (շումերական (Ք.ա. III հազ.), բաբելական (Ք.ա. II հազ.), Հին կտակարան (Ք.ա. I հազ.) և այլն) ուղղակի նշում են, որ նախաստեղծ Սրբազան Աշխարհը Հայաստանն է:

Նախաստեղծ Սրբազան Աշխարհ, աստվածների սրբազան կացարան, մարդու արարման և նախնական բնակության վայր, սրբազան Օրենքների երկիր, ջրհեղեղից փրկվելու վայր, Եդեմ ու Եդեմի այգի ... Երկիր մոլորակի որևէ այլ տարածք երբևէ նման բնութագրերի չի արժանացել:

Ինչու՞ հենց Հայաստանը:
Ե՞րբ ու որտե՞ղ են այդ պատկերացումների ծագման ակունքներն ու պատճառները:

**2.** Այս հարցերին պատասխանելու համար պիտի դիմենք հնագիտական տվյալների օգնությանը: Համաձայն հին աշխարհընկալումային պատկերացումների, երկրագործությունը, անասնապահությունը, արհեստները, գիրը, օրենքներն ու ծեսերը և մյուս քաղաքակրթական արժեքները մարդիկ ստացել են աստվածներից: Ովքե՞ր և որտե՞ղ են եղել մարդկանց բարիքներ պարգևող աստվածները: Հնագիտական տվյալները փաստում են, որ այդ աստվածները կամ Աստծո որդիները եղել են Հայաստանի բնիկները: Բերենք այդ փաստերն ըստ վերը թվարկված ասպարեզների.

ա) **անասնապահություն** - Ըստ առկա հնագիտական տվյալների, հիմնական ընտանի կենդանիները (խոշոր և մանր եղջերավոր անասուններ, խոզ, էշ, շուն) ընտելացվել են Հայաստանի տարածքում, ոչ ուշ քան 11.000 տարի առաջ (տես նկարը): Մի մեկաբանություն այս և հին ու նոր քարեդարյան մշակույթերը մեկնաբանող մյուս քարտեզների վերաբերյալ. դրանք չեն ընդգրկում Վանա լճից հյուսիս ընկած տարածքները (այդ թվում Հայաստանի Հանրապետությունը), քանի որ դրանց հին և նոր քարի դարի մշակույթները գործնականում ուսումնասիրված չեն: Վերջին մի քանի տարիների ընթացքում հին ու նոր քարի դարի ուսումնասիրման ասպարեզում արդյունավետ հետազոտություններ է կատարել հնագետ Բ. Գասպարյանը, որին կանդրադառնանք քիչ անց:




Հնագետներն ածխածնային մեթոդով որոշել են վաղ նոր քարի դարի դամբարաններից պեղված կենդանիների ոսկորների տարիքը և այդ տվյալներով որոշել, թե ընտելացված կենդանիները երբ և ինչ ուղղություններով են դուրս տարվել Հայկական լեռնաշխարհից: Առաջինն ընտելացված կենդանին այծն է: Ընտանի բոլոր այծերի նախնին բեզոարյան վայրի այծն է, որը Հայկական լեռնաշխարհի էնդեմիկ (բնիկ) կենդանին է: Այծ ոսկորների ժամանակագրման տվյալները հետազոտողներին հանգեցրել են այն եզրակացության, որ

ընտելացված այծը մոտ 11 հազար տարի առաջ դուրս է բերվել Հայաստանից և տարվել դեպի աշխարհի չորս կողմերը:

Եվրոպական ուղղության համար ստացված տվյալները ստորև ներկայացված են քարտեզի տեսքով (Fernández H., Hughes S., Vigne J.D., at al, Divergent mtDNA lineages of goats in an Early Neolithic site, far from the initial domestication areas, PNAS, 2006):




Քարտեզի վրա կետերով նշված է վայրի այծի բնակության տարածքը (Հայկական լեռնաշխարհ և որոշ հարակից տարածքներ): Մոտ 11.000 տարի առաջ ընտելացված այծը Եվրոպա է տարվել երկու ճանապարհով: Առաջինը՝ Փոքր Ասիա-Բալկաններ-Դանուբի ավազան-Հյուսիսային Եվրոպա: Երկրորդը՝ Փոքր Ասիա-Միջերկրական ծովի կղզիներ-Արևմտյան Եվրոպա: Ինչպես երևում է քարտեզում բերված տվյալներից, Հայկական լեռնաշխարհից վաղ նեոլիթյան մշակույթ (անասնապահություն, երկրագործություն, հարակից արհեստներ) տանողները Արևմտյան Եվրոպա են հասնում մոտ 4000 տարվա ընթացքում: Դա իր հերթին նշանակում է, որ նորեկների տեղաշարժը եղել է նոր հողերի յուրացնում ու բնակեցնում: Երկրորդ կարևոր հետևությունն այն է, որ նրանք տիրապետել են նավաշինությանն ու ծովային նավագնացությանն անհրաժեշտ գիտելիքներին:

Նմանատիպ հետազոտություններ են կատարվել նաև հարավային ուղղության համար: Վաղ նեոլիթյան մշակույթը ստեղծողների նոր հողեր յուրացնող ու բնակեցնող ալիքի մյուս ուղղությունները եղել են այսպիսին. Հայաստան-Պաղեստին-Եգիպտոս և Հայաստան-Միջագետք: Արտագաղթի այս ալիքն է վերջնականապես ձևավորում այսպես կոչված բարեբեր Լուսնի տարածքը: Հայաստան-Պաղեստին-Եգիպտոս ուղղության համար կատարված նույնատիպ հետազոտությունները հանգեցրել են հետևյալ պատկերին (տես ստորև քարտեզը Sh. Noriyuki, The archaeology of the first farmer-herders in Egypt : new insights into the Fayum Epipalaeolithic and Neolithic, Doctoral thesis, Leiden, 2010):




Fig.2.5. The earliest dates of domesticated sheep/goats in Egypt, the Negev and southern Levant

Հայաստանից 11000 տարի առաջ դուրս եկածների սերունդները Նեղոսի հովիտ են հասնում Ք.ա. ~6200թ (~8200 տարի առաջ), իմա՝ մոտ 2500 տարի անց: Նեղոսի դելտայի շրջանը ջրածածկ էր և նրանք նվարկելով անցնում են Կարմիր ծովն ու հայտնվում Վերին Եգիպտոսում՝ Բադարի, Նաքադա, Աբիդոս շրջանում: Այստեղ է ծնվում հետագա դասական եգիպտական քաղաքակրթությունը և աստիճանաբար տարածվում Նեղոսի հովտում: Նրանք գործնականում անմարդաբնակ Եգիպտոս են բերում երկրագործությունը, անասնապահությունը, արհեստներ, գիր, կրոն:

Հիշյալ հնագիտական հետազոտություններիզ բացի, Հայաստանից վաղ նոր քարի դարի մշակույթի տարածման ուղղությունների որոշման հավաստի աղբյուր են հանդիսանում նաև այծերի պատկերներով ժայռապատկերները: Դրանք տարածված են Պիրենեյան թերակղզուց մինչև Սիբիր ու Հնդկական թերակղզի (տես ստորև նկարը): Այստեղ ևս մեզ ուղղորդողը Հայաստանի տարածքում ընտելացված այծի պատկերներն են:

Ընդ որում, հաճախ այդ ժայռապատկերներն իրենց կատարման ոճով ու առկա նշաններով դժվար է տարբերակել Սյունիքի ժայռապատկերներից:




1. Ալպեր, 2. Միջին Ասիա, 3. Ալթայ, 4. Պաղեստին, 5. Հնդկաստան, 6. Եգիպտոս




Վերևի նկարում կարմիր գծից վերև նշված են հնավայրերի անվանումները և գունավոր եռանկյունիները ներկայացնում են այն վանակատի հանքավայրերը, որոնցից պատրաստված գործիքներ են հայտնաբերվել տվյալ հնավայրում: Կարմիր գծից ներքև հնավայրերի տարիքն է: Վանակատի հանքավայրերի և հնավայրերի տեղադրությունը տես ներքևի քարտեզում:

Հայկական լեռնաշխարհն առանձնահատուկ է նաև հրաբխային ծագում ունեցող կիսաթանկարժեք քարի՝ վանակատի (օբսիդիան) իր հանքավայրերով: Սկսած վաղ հին քարի դարից մինչև նորագույն ժամանակները, վանակատը լայն կիրառություն է ունեցել գործիքների ու զենքերի պատրաստման ասպարեզում: Հայկական վանակատից պատրաստված և վերին հին քարի դարին պատկանող զենքեր ու գործիքներ են հայտնաբերվել Բալկաններից մինչև Հնդկական թերակղզի և Եգիպտոսից մինչև Հյուսիսային Կովկաս ու Միջին Ասիա ընկած տարածքներում (օրինակ նախադինաստիական Եգիպտոսի (Ք.ա. IV հազ) վանակատէ գործիքների հայկական ծագման մասին տես G.A. Wainwright, Obsidian. Ancient Egypt, 3, 1927, pp. 77-93)




Առաջավոր Ասիայի վանակատի հիմնական հանքավայրերը գտնվում են Հայկական լեռնաշխարհում (սպիտակ եռանկյունիները):

Տարբեր հանքավայրերի վանակատները իրարից տարբերվում են իրենց քիմիական բաղադրությամբ ու օպտիկական հատկություններով: Իմանալով Հայաստանի տարածքից դուրս գտնված վանակատէ գործիքի տարիքը և այս կամ այն հանքավային պատկանելը, կարելի է որոշել, թե երբ և Հայաստանի որ տարածաշրջանի բնակիչներն են հասել գործիքի գտնելու վայրը:

բ) **երկրագործություն**- Հնագիտական տվյալները նույն պատկերն են ցուցադրում նաև երկրագործության համար: Ստորև բերված քարտեզը ներկայացնում է երկրագործության տարածումը Եվրոպայում, ըստ արդի հնագիտական տվյալների (M. A. Zeder, Domestication and early agriculture in the Mediterranean basin, diffusion and impact, PNAS, 2008):




**Fig. 2.** An integrated model of the Neolithic expansion in the Mediterranean Basin. The location of colonist farming enclaves is shown in the red ellipses. Approximate dates of these enclaves are given inside the ellipses in calibrated years B.P. Red dots represent areas that are proposed to have been settled by colonist farmers; green dots indicate areas where indigenous foragers adopted elements of the Neolithic package; and blue dots indicate areas of proposed integration of colonist farmers with indigenous foraging groups. Data were compiled from refs. 52, 54, 56, 57, and 65 and figure 7.1 of ref. 74.

Կարմիր շրջանակների մեջ են առնված այն տարածքները, որտեղ հնագետները հայտնաբերել են նոր քարի դարի երկրագործական մշակույթ: Ներսում գրված թվերը ցույց են տալիս այդ մշակույթների տարիքը (տարի առաջ): Ինչպես տեսնում ենք, աշխարհագրությամբ և ժամանակով Միջերկրական ծովի առափնյա տարածքներում երկրագործության տարածումը համընկնում է ընտանի այծերի տարածման Միջերկրածովյան ճանապարհի հետ:

Արդյունքում, հնագիտական տվյալների ամփոփումը հանգեցնում է այն եզրակացության, որ երկրագործությունը և անասնապահությունը ծագել ու զարգացել են Հայկական լեռնաշխարհում և վաղ նոր քարի դարում (11000 տարի առաջ) այնտեղից տարածվել է ամբողջ աշխարհով մեկ: Ակնհայտ է, որ երկրագործության ու անասնապահության հետ պիտի ձևավորվեին հարակից արհեստները. տների կառուցումը, բանակավայրերի հիմնումը, քարից, փայտից, ոսկորից, եղջյուրներից պատրաստված գործիքների արտադրությունը, հացահատիկն աղալու և հաց թխելու տեխնոլոգիաները,

Հայաստանի կենտրոնական շրջաններից երկրագործության ու անասնապահության տարածումը (13-11 հազար տարի առաջ) և Բարեբեր կիսալուսնի ձևավորումը (11-8 հազար տարի առաջ):

մրգերն ու հատապտուղները վերամշակելու տեխնոլոգիաները, կաշին ու կաթը վերամշակելու տեխնոլոգիաները:

Այս գիտելիքները Հայաստանի բնիկները տարածեցին ողջ Երկիր մոլորակի վրա. Եվրասիական մայրցամաք, Աֆրիկա, Խաղաղ օվկիանոսի կղզիներ, Ամերիկյան մայրցամաք: Այն տարածքներում, որտեղ չկային վայրի հացաբույսեր, նրանք ընտելացրին տեղական վայրի բույսերը և ստեղծեցին տեղական երկրագործություն դրանց հիման վրա: Օրինակ հարավ-արևելյան Ասիայում և Հնդկական թերակղզում ընտելացրին բրինձը, Աֆրիկայում՝ գետնախնձորի տեղական տեսակը, Խաղաղ և Հնդկական օվկիանոսների կղզիներում՝ բանանը, Ամերիկայում՝ եգիպտացորենը:

Հիշյալ տարածքների տեղաբնիկներն այդ դեպքերի հիշողությունները պահպանել են իրենց դիցաբանական զրույցներում: Օրինակ՝ ամերիկյան հնդկական ցեղերն իրենց ավանդազրույցներում պատմում են, թե ինչպես աստվածները դուրս եկան ծովից ու իրենց սովորեցրին մայիս (եգիպտացորեն) մշակել:

Նոր քարի դարում տեղի ունեցած այդ գլոբալիզացիոն պրոցեսի սխեմատիկ պատկերը բերված է ներքևի քարտեզում:




Հայաստանից քաղաքակրթական այս արժեքների տարածման նախնական արեալն ընդգրկում էր հարևան տարածքները. Փոքր Ասիան, Միջերկրական ծովի արևելյան ափամերձ տարածքները և Միջագետքն ու Զագրոսի լեռնաշղթան: Հայկական լեռնաշխարհը, Միջերկրական ծովի արևելյան ափերն ու Միջագետք+Զագրոսի լեռնաշղթան կազմում են այն տարածաշրջանը, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «Բարեբեր կիսալուսին» անվանումով (տես 6-րդ էջում բերված նկարը ): Հայաստանից երկրագործության ու անասնապահության տարածումը և Բարեբեր կիսալուսնի ձևավորումը սկսել է կայանալ 11-10 հազար տարի առաջ: Բնական է, որ բուն Հայաստանի տարածքում երկրագործությունն ու անասնապահությունը պիտի ծագեին շատ ավելի վաղ:

Պատմական Սյունիքի տարածքի ժայռապատկերներներում հաճախ են հանդիպում արօրների, եզներին լծված արօրով վար անելու, եզներին լծված սայլերի պատկերներ: Այդ պատկերները վկայում են, որ Սյունիքի բնիկները ժայռապատկերների փորագրման

ժամանակ արդեն ընտելացրել էին խոշոր եղջերավոր անասուններին, հայտնագործել էին անիվն ու արօրը, ունեին զարգացած (արօրային) հողագործություն (տես նկարները):

Եզներին լծած արօրով վար անելու տեսարան Սյունիքի ժայռապատկերներից:



Եզներին լծված սայլերի պատկերներ Սյունիքի ժայռապատկերներից:

Սյունիքի ժայռապատկերների թվագրման համար մեր կողմից մշակված մի քանի անկախ մեթոդների կիրառման արդյունքները ցույց են տալիս, որ դրանք փորագրվել են Ք.ա. XIII հազարամյակից առաջ, իմա՝ նրանց տարիքը 15.000 տարուց ավելին է (տես՝ Հ. Մարտիրոսյան, Հայկական ժայռապատկերների և հին աշխարհի գրային համակարգերի ծագումնաբանական առնչությունները, Բազմավէպ, 2008, էջ 198; նույնի անգլերեն տարբերակը՝ https://www.academia.edu/3619258/CORRELATIONS_IN_THE_ORIGIN_OF_THE_ARMENIAN_PICTOGRAMS_AND_THE_ANCIENT_WORLD_WRITING_SYTEMS_1._THE_EGYPTIAN_HIEROGLYPHS):

Հետևաբար, եթե ժայռապատկերներում առկա են արօրով վար անելու և սայլերին լծված եզների պատկերներ, ապա կարող ենք ասել, որ բուն Հայաստանի կամ նրա մի մասի (Սյունիքի) տարածքում զարգացած երկրագործությունը և ընտանի կենդանիները գոյություն են ունեցել վերին հին քարի դարում, առվազն 15.000 տարի առաջ: Զարգացած երկրագործությունն ու անասնապահությունն էլ դարձել են բնակչության կտրուկ աճի ու այն դեմոգրաֆիկ պայթյունի պատճառը, որի հետևանքով վաղ նոր քարի դարում Հայաստանի բնիկների մի մասը լքում է իր նախնական բնակության վայրը, նոր բնակավայրեր հիմնելու և երկրագործության համար պիտանի նոր հողեր յուրացնելու նպատակով:

Մարդկային գործոնից բացի, Հայաստանը, երկրագործության ու անասնապահության ծագման ու զարգացման տեսանկյունից, աշխարհում բացառիկ է նաև այն պատճառով, որ

ա) Հայաստանի տարածքում համատեղ աճել են ցորենի, գարու, հաճարի, սիսեռի, ոլոռի, կտավիատի վայրի տեսակները,

բ) գոյություն են ունեցել խոշոր եղջերավոր անասունների (կով, գոմեշ), այծի, շան, խոզի, էշի վայրի տեսակները (վայրի ոչխարը Միջերկրական ծովի ավազանից Հայկական լեռնաշխարհ է անցել մոտ 10.000 տարի առաջ և հետո միայն ընտելացվել),

գ) աճել են խնձորի, տանձի, դեղձի, ծիրանի, սալորի, խաղողի վայրի տեսակները:

Աշխարհի որևէ այլ տարածաշրջան չէր կարող դառնալ երկրագործության, այգեգործության, անասնապահության միասնական ծագման ու զարգացման օջախ, քանի որ դրա համար անհրաժեշտ հացաբույսերի, մրգերի ու կենդանիների վայրի տեսակների համատեղ գոյություն եղել է միայն Հայկական լեռնաշխարհում:

գ) **մետաղագործություն - պղնձի դար -** Վաղ նոր քարի դարում երկրագործության ու անասնապահության տարածումը կապված էր Հայաստանի բնակչության արտահոսքի երկրորդ ալիքի հետ, որը տեղի է ունեցել 11000 տարի առաջ: Արտահոսքի նախորդ՝ առաջին ալիքի մասին կխոսենք լեզվին նվիրված բաժնում: Մետաղագործության տարածումը կապված է Հայաստանից բնիկների երրորդ հնագիտորեն տեսանելի արտահոսքի հետ:




Այս ասպարեզի տեսանկյունից ևս Հայաստանի տարածքն առանձնահատուկ է, քանի որ հիմնականում Հայաստանի տարածքում են կուտակված մետաղների (ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, կապար) հիմնական հանքավայրերը: Այդ հանքավայրերից մի քանիսը (բնական ձուլակտորներ պարունակող) սկսվել են օգտագործվել վաղ նոր քարի դարի ժամանակներում:




Հնագույն մետաղագործությունը ևս ծագել է Հայկական լեռնաշխարհում, ոսկու և պղնձի բնակտորների սառը կոփման եղանակով և պատրաստվել են զարդեր ու փոքր չափերի գործիքներ:

Հանքի արդյունահանումը և մետաղաձուլությունը սկզբնավորվել է Ք.ա. VI հազարամյակում:

Մետաղագործության նախնական օջախի տեսանկյունից ևս Հայկական լեռնաշխարհն առանձնահատուկ է իր մետաղական (ոսկի, պղինձ, արծաթ, կապար, երկաթ) հարուստ հանքավայրերով:

Պղնձի և բրոնզի դարաշրջաններում Հայաստանը եղել է Առաջավոր Ասիայի մետաղների հիմնական մատակարարը:




Մարդկության պատմության խոշոր պարբերաշրջաններից մեկը կոչվում է պղնձի դար, որը հաջորդում է նոր քարի դարին: Պղինձն առաջին մետաղն է, որը ստացվել է հանքանյութի ձուլման ճանապարհով: Ըստ առկա հնագիտական տվյալների, պղնձաձուլության հնագույն օջախը եղել է Հայաստանի հարավ արևմտյան մասում, որտեղից մոտ 7500 տարի առաջ դուրս են տարվել պնձահանքի բացահայտման, հանքանյութի ձուլման և պղնձի մշակման վերաբերյալ գիտելիքները և սկզբնավորվել է պղնձի դարը:

Եթե հնագիտորեն կարելի է հետևել երկրագործների ու անասնապահների ողջ ուղին նախահայրենիքից մինչև վերջնական բնակության վայրը, ապա նույն ճանապարհն անցած մետաղագործների հնագիտական հետքերը հնարավոր է տեսնել միայն այնտեղ, որտեղ կան համապատասխան հանքավայրեր: Այդ իսկ պատճառով հին աշխարհի մետաղագործական կենտրոնները բաշխված են անհավասարաչափ և գտնվել են իրարից մեծ հեռավորությունների վրա:

Մետաղաձուլությունն ու մետաղագործությունը հիմք դրեցին աշխատանքի տարածաշրջանային բաժանման: Երկրագործներով ու անասնապահներով բնակեցված տարածքներում կղզյակների ձևով հայտնվեցին մետաղագործների բնակավայրերը և մարդկային հասարակությունը բաժանվեց երկու մեծ խմբերի. մետաղ արտադրողների և մետաղ սպառողների: Սկիզբ առավ միջտարածաշրջանային ապրանքափոխանակությունն ու առևտուրը:

Պղնձաձուլողներն ու դարբիններն օգտագործելով կրակի ուժը, փխրուն հանքաքարից ստանում էին կարմիր փայլուն մետաղ և այն կոփելով, հաղորդում էին ցանկացած ձև: Մարդիկ դա ընկալում էին որպես կախարդական, գերբնական երևույթ և այդ արհեստներին տիրապետողներին համարում էին աստվածային շնորհներ կրողների, խորհրդավոր ու գերբնական ուժերի հետ հաղորդակցվողների, նրանց վերագրում աստածազարմ ծագում: Ծնվում են կրակը սանձող ու դարբիններին հովանավորող աստվածների գաղափարները, ինչպիսին էր դասական Հունաստանի Հեփեստոսը, ով Զևսի համար շանթեր էր կռում:

## Այլ փաստեր

Անշուշտ երկրագործության ու անասնապահության, մետաղագործության և հարակից արհեստների ասպարեզում արված նորարարություններին զուգահեռ ընթանում էր գիտելիքների կուտակում, համակարգում: Ամեն մի բացահայտում համարվում էր տվյալ ասպարեզի հովանավոր Աստծո բարի կամքի դրսևորում, նրանից առաքված շնորհ: Մյուս կողմից, այդ գիտելիքները նպաստում և օգնում էին ճշմարիտ աստվածապաշտություն ձևավորել ու դիցարանի կառույցը կարգավորել, զարգացնել: Հին աշխարհում Տիեզերքը պատկերացվում էր եռոլորտ (Ստորերկրյա աշխարհ, Երկիր, Երկինք); Այդ երեք ոլորտներում էին բնակվում աստվածները, սակայն ժամանակային որոշակի պարբերությամբ նրանք մի ոլորտից անցնում էին մյուս ոլորտ: Ժամանակի այդ պարբերաշրջաններն այսօր էլ գործածվող ժամանակի միավորներն են (օր, ամիս, տարի): Այս պատկերացումներն էին շարժառիթը, որպեսզի սկսվեր երկնային լուսատուների ծագումների ու մայր մտնելու պահերի դիտարկումները և ստեղծվեին առաջին «աստղադիտարանները» (Հ. Մարտիրոսյան,

Սիսիան, Զօրաց քարեր, Ցից քարեր Քարահունջ,..,
https://independent.academia.edu/HamletMartirosyan):

Ներկա հնագիտական տվյալները փաստում են, որ երկնային լուսատուների ծագումները դիտելու հնագույն հարմարանքները ևս ստեղծվել են Հայաստանում: Դրանցից հանրահայտը Սիսիան քաղաքի հարևանությամբ գտնվող մեգալիթյան կառույցն է (Զօրաց քարեր): Զօրաց քարեր համալիրը աշխարհի նմանատիպ կառույցներից ամենամեծն է և ամենահինը: Ըստ նախնական հետազոտությունների, այն հիմնադրվել է առնվազն 7500 տարի առաջ (Պարիս Հերունի, Հայերը և հնագույն Հայաստանը, Երևան, 2006):

Հանրահայտ են նաև Եգիպտոսի Նաբտա Փլայա (Nabta Playa) և Անգլիայի Սթոունհենջ (Stonehenge) մեգալիթյան կառույցները, որոնց աստղագիտական նշանակության վերաբերյալ հարյուրավոր գրքեր ու հոդվածներ են գրվել:

Ըստ ժամանակակից հնագիտական տվյալների, Նաբտա Փլայան կառուցվել է Ք.ա. VI հազարամյակում, իմա՝ Նեղոսի հովտում եկվոր երկրագործ-անասնապահների հայտնվելուց հետո:

Նույն պատկերն է Սթոունհենջի պարագայում. ըստ հնագիտական տվյալների, այս մեգալիթյան կառույցը հիմնադրվել է Ք.ա.~3100թ, իսկ Հայաստանից ընտելացված այծի հետ դուրս եկած երկրագործ-անասնապահը Բրիտանիա է հասել մոտ Ք.ա. 5000թ:

Երկու դեպքում էլ հանգում ենք այն եզրակացության, որ մեգալիթյան կառույցները հիմնել են Հայաստանից դուրս եկած երկրագործ-անասնապահների սերունդները, ցեղակիցները նրանց, ովքեր Հայաստանում կառուցել են Զօրաց քարերը:

**դ) մետաղագործություն - բրոնզի դար** - Մաքուր պղինձը համեմատաբար փափուկ է և նրանից պատրաստված գործիքները շատ արագ դառնում էին անպիտան: Մարդը պղնձի և անագի խառնուրդից ստանում է մի այլ մետաղ՝ բրոնզ, որը շատ ավելի ամուր է քան պղինձը և հեշտ մշակելի: Այս տեխնոլոգիական նորամուծությամբ սկզբնավորվեց քաղաքակրթության պատմության նոր՝ բրոնզի դարաշրջանը: Պղնձահանքերով հարուստ Հայաստանում արդյունահանվում էր նաև անագ: Ասորեստանյան սեպագիր աղբյուրներից (Թել Ռիմահ) իմանում ենք, որ Հայաստանը (Նաիրի) Միջագետք, Սիրիա և Պաղեստին էր արտահանում բրոնզ, երկաթ, անագ: Պատմական տվյալներով անագի (կասիտերիտի) հանքանյութ արդյունահանվել է Վանա լճից արևելք ընկած շրջանում, իսկ մկնդեղի հանքանյութը, որը նույնպես օգտագործվել է բրոնզի ձուլման մեջ, արդյունահանվել է Մուրց (Հասանկալա) գետի ավազանում: Ք.ա. III-II հազարամյակներում անագ էր ներկրվում նաև Պիրենեյան թերակղզուց: Սակայն Ք.ա. XIIIդ Պիրենեյան թերակղզում սկսվում է տեղական բրոնզի ձուլումը և անագի արտահանումը դադարեցվում է:

Անագի անվանումը ևս բնիկ հայերեն է: Որոշ լեզվաբաններ, անտեսելով պատմա-հնագիտական տվյալները և մեխանիկական մոտեցում ցուցաբերելով, տեսակետ են հայտնել, թե հայերեն անագ բառը փոխառություն է շումերա-աքքադական միջավայրից. nagga

(շումերեր.) և anaku (աքքադ.): Հանքավայրերից ու մետաղաձուլական կենտրոններից զուրկ Միջագետքի բնակիչները, ովքեր զբաղվել են միայն մետաղի երկրորդական մշակմամբ, իրենք են «անագ» անվանումը փոխ առել նրանցից, ովքեր արդյունահանել են հանքանյութը, ձուլել մետաղը և կատարել մետաղի առաջնային մշակումը: Նույն կերպ պղնձի մի այլ համաձուլվածքի հայերեն «արույր» անվանումից պիտի փոխառություն դրվի շումերերեն URUDU=$u_2$-ru-$ra_2$=arur կամ URUDU=$u_4$-ru-$ra_3$=arur բառը, որը գործածվել է պղինձ իմաստով:

Նույն մեխանիկական մոտեցմամբ լեզվաբանները հայերեն «պղինձ» բառը փոխառություն են դնում «արույր, պղինձ» նշանակող պարսկերեն pirinǰ կամ birinǰ բառերի նախաձևից, ընդ որում նշելով, որ իրանական բառերի ծագումը հայտնի չէ: Նախ՝ իրանական ցեղերը ոչ մի առնչություն չեն ունեցել հանքարդյունաբերության ու մետաղաձուլության հետ և երկրորդ՝ նրանց հետքերը Իրանական բարձրավանդակում սկսում են երևալ Ք.ա. ~VIIIդ: Այնինչ հայերեն «պղինձ» բառը ներքին ստուգաբանությամբ բացատրվում է որպես պող=«կայծ, կրակ, փայլ» և ընձուիլ, ընծուիլ=«լույս ցոլալ, ճառագայթել, փայլել» բառի «ինձ» արմատից կազմված բարդություն. պող-ինձ > պղինձ ու տառացի նշանակել է «կրակացող, կայծկլտացող, կրակի պես ճառագայթող»: Եւ ուրեմն պիտի փաստել, որ իրականում հայերենից է «պղինձ» բառն անցել պարսկերենին:

Այս լեզվաբանական տվյալները վկայում են այն մասին, որ հանքարդյունաբերության ու մետաղաձուլության ակունքներում կանգնած են եղել Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ հայերը: Սրան կանդրադառնանք հաջորդ՝ լեզվին նվիրված բաժնում:

Պղնձի դարից բրոնզի դարին անցումը ևս տեղի է ունեցել Հայաստանում, ինչի մասին վկայում են պեղված տասնյակ հնավայրերը, որոնցից ցայտունը թերևս Արենի քարանձավն է (Areni-1 Cave, Armenia: A Chalcolithic–Early Bronze Age settlement and ritual site in the southern Caucasus, K. N. Wilkinson, B. Gasparian, R. Pinhasi et all, Journal of Field Archaeology, 2012 Vol. 37, № 1): Արենի քարանձավից պեղված մի շարք գտածոներ ունեն քաղաքակրթական արժեք և առկա հնագիտական տվյալների համաձայն համարվում են աշխարհում հնագույնները.

1. 6100 տարվա հնության գինեգործարան,
2. 5900 տարվա հնության ծղոտից հյուսված կանացի փեշ,
3. 5500 տարվա հնության կաշվե տրեխ (տես ստորև նկարները):

Հայաստանի վաղ բրոնզի դարի մշակույթը, որի սկզբնավորումը նկատելի է նաև Անի քարանձավում պեղված հնագիտական նյութում, մասնագիտական գրականության մեջ անվանվում է «Կուր-արաքսյան մշակույթ»:

«Անշուշտ պետք է նկատի ունենալ, որ այդ մշակույթի կուր-արաքսյան, հարավային անդրկովկասյան անվանումները հնացած տերմիններ են: Իրականում այն Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքն ընդգրկող վաղ բրոնզեդարյան մշակույթն է, որի սահմանները հյուսիս արևմուտքում ընդգրկել է Տայքի ծայրագավառ՝ Սպերի Բլուր (Պուլուր) հնավայրը, հյուսիսում՝ Գուգարքը, Կուրից հարավ ընկած մի շարք նշանավոր հուշարձաններով (Ամիրանիս-գորա, Թեթրի-Ծղարո, Թամարիսի, Սամշվիլդե), հյուսիս-արևելքում և

արևելքում՝ ամբողջ կուր-արաքսյան միջագետքը, հարավ-արևելքում՝ Պարսկահայքը (Գեոյ-թեփե, Գելենջիկ, Յանիկ-թեփե), հարավում այն պետք է որ տարածված լիներ Կորճայքում, Մոկքում, Աղձնիքում և հարավ-արևմուտքում ընդգրկելով Ծոփաց կողմը, այն հասնում է նաև Մալաթիա, Արգուվան, իսկ արևմուտքում՝ Սվազ (Զարա, Հաֆիկ):

Հայկական լեռնաշխարհից դեպի Սիրիա-Պաղեստին միգրացիան, հավանաբար, ծայր է առել դեռևս Ք.ա. IV հազարամյակի սկզբից: Այդ է վկայում հարավային Պաղեստինում, Բերշեբա-Հասուլի խալկոլիթյան շերտերում (Ք.ա. 3500թ) հայտնաբերված ուղղահայաց փոքրիկ կանթերով խեցեղենը, որն ըստ Ջ. Մելարտի՝ տեղական չէ և բնորոշ է Արևելյան Անատոլիայի եկվոր ցեղերի (այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածներից գաղթածների - Է. Խ.) մշակույթին: Ինչպես տեսանք, Էլառում և Արարատյան դաշտավայրում (Զրահովիտ, Արևիկ, Շենգավիթ) նման կանթերը գոյատևում են նաև ամբողջ Ք.ա. III հազարամյակի ընթացքում:

Սակայն այդ միգրացիան հսկայական չափեր է ընդունում վաղ բրոնզեդարյան մշակույթի ծաղկման շրջանում, երբ այն դուրս գալով իր ափերից, հեղեղում է Սիրիան ու Պաղեստինը, Էգեյան աշխարհը, Հյուսիս-արևելյան Կովկասն ու հասնում միջին Եվրոպա (Է. Խանզադյան, Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 143-144): Թեև անվանի հնագետը՝ լուսահոգի Էմմա Խանզադյանը, այս տողերը գրել է 1979թ, սակայն ցավով պետք է նշել, որ հետագա տասնամյակների ընթացքում հայ հնագետների կողմից նրա արտահայտած գաղափարը ոչ միայն չզարգացվեց, այլ՝ անիրավացիորեն անտեսվեց:




Բերված քարտեզում Հայաստանի վաղ բրոնզի դարի մշակույթի (Քուռ-արաքսյան մշակույթի) ընդգրկած տարածքն է (M. Kibaroglu , A. Sagona, M. Satir, Petrographic and geochemical investigations of the late prehistoric ceramics from Sos Höyük, Erzurum (Eastern Anatolia), J. of Archaeological Science 38, 2011), որն իր գծագրությամբ հիշեցնում է Բարեբեր կիսալուսնի ձևավորման նախնական փուլի պատկերը: Այս տարածքը հայ ազգի բնօրրանն է, Երկիր մոլորակի դարակազմիկ քաղաքակրթական արժեքներ ծնող արգանդը:

Հայկական լեռնաշխարհում է ձուլվել առաջին բրոնզը, այստեղ է ձևավորվել վաղ բրոնզի դարի մշակույթը: Բրոնզէ գործիքների կիրառումը կտրուկ բարձրացնում է հողի մշակման ու ոռոգման արդյունավետությունը, ինչն իր հերթին բարձրացնում է երկրագործության արդյունավետությունը: Հետևում է բնակչության կտրուկ աճ, որը հանգեցնում է հերթական դեմոգրաֆիկ պայթյունի: Այդ դեմոգրաֆիկ պայթյունի ալիքներն են որ, Է. Խանզադյանի դիպուկ բնորոշմամբ, «դուրս գալով իր ափերից, հեղեղում է Սիրիան ու Պաղեստինը, Էգեյան աշխարհը, Հյուսիս-արևելյան Կովկասն ու հասնում միջին Եվրոպա»: Այդ ալիքների հետ իրենց բնօրրանից հեռանում են նաև բրոնզի ձուլման գիտելիքները յուրացրած վարպետներ և նրանց գործունեության արդյունքում է սկսվում հին աշխարհի «բրոնզացման» պրոցեսը (տես ստորև բերված քարտեզը):




Կարմիր թվերով գրված են տվյալ տարածաշրջանում բրոնզի դարի սկզբնավորման ժամանակը (Ք.ա.):

Հայկական լեռնաշխարհից դուրս եկած այս մշակույթի ալիքներն են ծնում հին աշխարհի դասական քաղաքակրթական կենտրոնները Միջագետքում, Նեղոսի, Ինդոսի, Դանուբի, Խուանխեի հովիտներում: Ստեղծվում են առաջին գրային համակարգերը և մարդկությունը մուտք է գործում պատմական դարաշրջան: Նոր գործիքների կիրառումը բարձրանում է երկրագործության արդյունավետությունը, որին հետևում է բնակչության կտրուկ աճը, ձևավորվում են առաջին քաղաքները, պետությունները:

Բրոնզից ձուլվում էին ինչպես գործիքներ, որոնք պղնձէ գործիքների համեմատ ավելի արդյունավետ էին ու դիմացկուն, այնպես էլ որակյալ զենք ու զրահ:

Վաղ բրոնզի դարում անբարենպաստ կլիմայական պայմանները Արաբական թերակղզուց դուրս են մղում սեմական քոչվոր ցեղերի առաջին ալիքը: Նրանք սկսում են ավազակային հարձակումներ կատարել Եգիպտոսի ու Միջագետքի բարեկեցիկ կյանքով ապրող երկրագործների վրա: Սկսվում է մեծամասշտաբ պատերազմների դարաշրջանը:

Ք.ա. II հազարամյակի վերջին քառորդում բրոնզին փոխարինելու է գալիս երկաթը և մարդկությունը թևակոխում է երկաթի դար: Արդի պատմագիտության մեջ գերիշխում է այն թյուր տեսակետը, թե հայ ազգը ձևավորվել և պետականություն է ստեղծել երկաթի դարում:

## Ամփոփում

Հիմնվելով ներկայիս հայտնի հնագիտական փաստերի վրա, ուրվագծեցինք մարդկային քաղաքակրթության ծագման ու զարգացման ուղին վերին հին քարի դարից մինչև երկաթի դար: Տեսանք, որ ավելի քան 15.000 տարի տևած ժամանակահատվածում քարե պարզունակ գործիքներ օգտագործող մարդկությունը հավաքչության, որսորդության, պարզունակ երկրագործության նախնական փուլից հասավ երկաթի դար, ստեղծեց պետություն, գիր ու գրականություն, կառուցեց քաղաքներ:

Մարդկային քաղաքակրթության ծագման ու զարգացման այդ երկարատև ճանապարհին վերաբերող հնագիտական տվյալների վերլուծությունը հանգեցնում է մի քանի հիմնարար եզրակացությունների.

- **Մարդկային քաղաքակրթությունն ունեցել է ծագման ու զարգացման մի օջախ, իմա՝ եղել է միակենտրոն: Քաղաքակրթությունը զարգացման մղող նոր գիտելիքներն ու տեխնոլոգիաները միշտ ծագել են այդ կենտրոնում և ապա հենց ստեղծողների միջոցով տարածվել ամբողջ աշխարհում:**
- **Միակենտրոն քաղաքակրթության օջախ է հանդիսացել Հայկական լեռնաշխարհը:**
- **Այդ նույն ժամանակահատվածում Հայկական լեռնաշխարհում չեն նկատվում տեղական մշակույթից կտրուկ տարբերվող և դրսից ներմուծված օտար մշակույթի հետքեր: Հնագիտական նյութերը փաստում են, որ Հայաստանի մշակույթն այդ ժամանակի ընթացքում չունի խզումներ, անընդհատ է, զարգացել է իր բնական հունով, առանց արտաքին օտար ազդեցությունների:**

Ովքե՞ր էին այդ ժամանակահատվածում բնակվում Հայկական լեռնաշխարհում, ի՞նչ ազգային պատկանելիություն ունեին, ի՞նչ լեզվով էին խոսում: Ազգային պատկանելիության միարժեք որոշման ճանապարհը նրանց լեզվի բացահայտումն է: Հաջորդ նյութում կփորձենք օգտագործել հնագիտական տվյալների ընձեռնած հնարավորությունները և պատասխանել այդ հարցերին:

Համլետ Մարտիրոսյան

e-mail hmart@yerphi.am

Hamlet Martirosyan

phone (+374) 091-07-12-03